

## Կերակրափողի խցանում

**Հիվանդության բնորոշումը.** Հիվանդությունը ընթանում է շատ արագ և բուժօգնություն չցուցաբերելու դեպքում բերում է կենդանու անկմանը:

**Պատճառները.** Կերակրափողի խցանման պատճառ կարող են լինել կուլ տված ամբողջական կարտոֆիլը, ճակնդեղը, գազարը, գոնգեղը, կաղամբի արմատները, խնձորը, տանձը և այլ մրգեր, առարկաներ:

**Կլինիկական նշանները.** Նշանները ի հայտ են գալիս հանկարծակի, կենդանին հրաժարվում է կեր ընդունելուց, հաճախակի է կատարում կուլ տալու շարժումներ, ձգում է պարանոցը, որոճը և բղկոցները դադարում են, բերանից հոսում է փրփրախառը թուք, առաջանում է փքանք: Ձախ կողմի (քանի որ կենդանիների կերակրափողը գտնվում է պարանոցի ձախ մասում) խցանված հատվածում՝ լծային ակոսում (փոսիկում), դիտելու և շոշափելու միջոցով հայտնաբերվում է օտար մարմինը:

Արգելվում է կերակրափողում խցանված կերը արտաքինից սեղմելով ջարդել, այլապես կվնասեք կենդանու կերակրափողը:

**Բուժումը.** Բուժման համար նախ և առաջ անհրաժեշտ է անհապաղ դիմել անասնաբույժին: Իսկ մինչ անասնաբույժի գալը՝ Դուք կարող եք ինքներդ ցուցաբերել առաջին բուժօգնություն: Դրա համար կարող եք հետևել խորհուրդին.

### ԽՈՐՀՈՒՐԴ

- Օտար առարկայի և կերակրափողի պատերի շփումը թուլացնելու համար կերակրափողի մեջ լցրեք բուսական կամ վազելինային յուղ:
- Պարանոցի վերին հատվածում խցանված օտար մարմինը աշխատեք դուրս բերել բերանից (դրսից կատարելով մերսում լծային ակոսից դեպի բերանը), իսկ եթե օտար մարմինը գտնվում է պարանոցի ստորին հատվածում կամ կրծքավանդակի հատվածում, ապա այն առաձգական զոնդի միջոցով հրեք դեպի կտրիչը:
- Այն դեպքում, երբ խցանումից առաջացած փքանքը սպառնում է շնչահեղձության, խորհուրդ է տրվում կատարել կտրիչի ծակում (մանրամասն նկարագրությունը տես փքանքի բուժում բաժնում, էջ.....):